



ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարեկանը 6 բուբլի.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мпакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆՈՒԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրագործական մի-
նիստը իր Թատրոնի շուրջը. Նամակ Ս. Պե-
տրոսովից. Նամակ Սեդրակովից. Ներքին լու-
սեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրիստի ճառը.
Ներքին լուսեր. —ՀԵՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ. Պ. Շանթի ճա-
նապարհորդութիւնը. Արտաքին լուսեր. —ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ. —ՀԵՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ. —ԲՈՐՈՍԱ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երևանեան նահան-
գում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՆԻՍԹԵՐՈՒԹԻՒՆ

Բաւական ժամանակից ի վեր արդէն խօսք
կայ այն մասին, որ այժմեան մինիստրութիւնները
վրա պէտք է աւելանայ մի նոր մինիստրութիւն.
—այն է երկրագործական մինիստրութիւն: Այդ
նախագիծը այժմ բաւական մօտ է իրագործ-
ման, և Պետերբուրգում, կառավարչական բարձր
շրջաններում, մինչև իսկ մշակվում է ապագայ
մինիստրութեան իրաւասութեան նախագիծը:

Մինիստրական յանձնաժողովը արդէն անհրա-
ժեշտ է համարել, որ լինի մի առանձին բարձր
հիմնարկութիւն, որի պարտաւորութիւնը պիտի
լինի—ուսումնասիրել Ուստաստանի գիւղատնտե-
սական դրութիւնը, կապել գիւղատնտեսական
արդիւնաբերութեան շահերը առևտրին հետ, կա-
ռավարել և զարգացնել գիւղատնտեսական ուս-
ման գործը կայսրութեան մէջ, պաշտպանել երկ-
րի գիւղատնտեսական շահերը կառավարչական
միւս հաստատութիւնների առջև և այլն:

Այդ բոլոր գործերը, և իրա հետ միասին ուրիշ
գործեր կատարելու համար է ահա, որ հիմնվելու
է երկրագործական մինիստրութիւնը: Հեռագի-
րը արդէն լուր բերեց, որ նախագիծը կայ
նոր մինիստրութեան հետ միացնել մի քանի գե-
պարտամիներ, որոնք մինչև այժմ համարվում
էին պետական կալուածները մինիստրութեան
բաժնի: Բացի դրանից մի քանի ուրիշ գեպարտա-
միներն էլ, որոնք գտնվում էին ուրիշ մինիստ-
րութիւնների իրաւասութեան ներքոյ, բայց կապ

ունեն գիւղատնտեսական գործերի հետ, նոյնպէս
կը միացվին նոր մինիստրութեան: Գիւղատնտե-
սական ուսման և զարգացնելի գործը կը յանձնվի
նոր մինիստրութեան մի առանձին գեպարտա-
մինիստրութեան:

Այդ բոլորից երեւում է, որ երկրագործական
մինիստրութիւնը կը կառավարի երկրի գիւղա-
տնտեսական արդիւնաբերութեան վերաբերեալ
բազմատեսակ գործեր, և կունենայ շատ բաժնի-
ներ՝ ամեն տեսակի գործերի համար: Այդ նոր և
անկախ հաստատութիւնը անկասկած միջոց կու-
նենայ աւելի մօտիկ կերպով ծանօթանալու պե-
տութեան գիւղատնտեսական-արդիւնաբերական
դրութեան հետ, և մի առանձին երկրագործական
մինիստրութեան հիմնելը արդէն ինքն ըստ ին-
քեան ուղղակի ապացոյց է, որ կառավարութեան
բարձր շրջաններում միմյանց է առանձին ուշա-
դրութիւն դարձնել պետական կեանքի գիւղա-
տնտեսական կողմի վրա:

ԲՈՐՈՍՈՒՆ ԶՈՒՐԱԳ

Կան միամիտներ, որոնք երևակայում են թէ
Թիֆլիսի օպերան կը թուի է, գեղարուեստական
զարգացումը պատճառում հասարակութեանը:

Երանի այդպէս հաւատացողներին: Տարաբա-
զաբար այդ խղճով օպերայի բեմը, գուցէ հակա-
ռակ իր անկողը ցանկութեան, չէ համարում նաչա-
տակելու: Նա դարձել է ոչ թէ հատարակութեան
կրթիչ զարգացումն տող, այլ զանազան խմբե-
րի մրցումների ասպարէզ, ընդ նախագահութեամբ
արտիստական ընկերութեան: Ահա ձեզ մի խումբ
մարդիկ, որոնց մասին ասում են, թէ երաժշտու-
թեան մեկնամաներ են, կամ երաժշտագէտներ,
կամ վերջապէս երաժշտական գործիչներ...

Ինչ են ասում դրանք.—միշտ թատրոն են դա-
լիս.—թատրոնը նրանց համար նոյնն է դարձել,
ինչ որ, մեզ և ձեզ համար, ընթերցող, մեր տնե-
րը.—միշտ թատրոնի մասին են խօսում, տաքա-
նում, բղավում, ծափահարում, չվազնում են, սրան
նրան դրում են այսպէս կամ այնպէս գրել, միշտ
գնում գալիս են և այդ ծիծաղելի դերը կատարե-
լով, երազում են՝ թէ գեղարուեստի մեծ գործին
են ծառայում...

հատուցանել իրանց ստացած ամեն բերքերի մի
յայտնի մասը բնական դրութեան մէջ, և ոչ թէ
փողով: Երևանի գաւառի գիւղերը, որոնք գտն-
վում են Թիֆլիսից դէպի Երևան տանող ճանա-
պարհի ուղղութեամբ՝ մեծ մասամբ հաստատված
են արձուկի հողերի վրա, թէև դրանց թուով կան
և միւլքաղաքների գիւղերը: Ապա Դաւաթուի ուղ-
ղութեամբ գտնվող՝ Չանդի-Բասարի և Գանդի-
Բասարի գիւղերը հաստատված են մեծ մասամբ
կալուածատէրերի հողերի վրա: Այդտեղ կալուա-
ծատէրերի մեծ մասը թուրք լսաներն ու բէկերն
են: Վերջ-Բասարի գիւղերը գտնվում են մասամբ
կալուածատէրերի, մասամբ էլ արձուկի հողի
վրա: Մեծ մասամբ կալուածատէրերի հողերն են
(և մեծ մասամբ թուրք կալուածատէրերի) այն
հողերը, որոնց վրա կառուցված են Սուրմալուի
գաւառի և Հին-Նախիջևանի գաւառի գիւղերը:

Աշտարակի և Արարատի գիւղերը ամբողջապէս
արձուկի հողերի վրա են հաստատված: Վերջա-
պէս էջմիածնի վանքի վեց թէ եօթ գիւղերը
միւլքաղաքական հողի վրա են հաստատված և
այդ գիւղերի կալուածատէրը (միւլքաղաքի իրա-
ւունքով) ինքն վանքն է:

Գալով իմ այցելած գիւղերի շինուածքի տիպին,
—այդ տիպը իրարից տարբերվում է նայելով
տեղի գիւղերի և կլիմայի ու բնական հարստու-
թիւնների պայմաններին: Անտառը առհասարակ
բացակայ լինելով Երևանեան նահանգում (բացի
մի քանի տեղերում արուեստական կերպով դար-
գացրած մէրեններից), չգիւղական բնակութիւննե-

Մարդ չէ իմանում՝ պարագում են դրանք, թէ
անպատճառ աղմուկներ են ուղում յարուցանել,
որ իրանց համար զուարճութիւն գտնեն:

Ոչ ոք չէ մտածում բեմի աշտուղութեան մասին,
ոչ ոքի հոգը չէ թատրոնի գոյութիւնը և կատա-
րելիք դերը: Ամենքն էլ իրանց «էջն են ըշում»:
Կուսակցութիւններ են կազմվում— և այդ բոլորը
մեծ մասամբ այս և այն երգչուհու համար: Կու-
սակցութիւններ են կազմվում— և մեծ մասամբ
այս և այն երգչի դէմ:

«Խաթրի» կուսակցութիւնները իրանց նորքը
ցոյց են տալիս և տեղական լրագրիչների մէջ:

Վերջում էք այդ լրագրիչները և կարողւմ էք
մի և նոյն օպերայի և մի և նոյն երգչուհիների և
երգիչների մասին գրածները: Կարողւմ էք և ու-
սերը թափ տալիս: Լաւ, ասենք թէ մարդկանց
ճաշալը տարբեր է. բայց միթէ յիշուի այլ ևս
գոյութիւն չունի ոչ մի ընդհանուր չափ, ե-
րաժշտական ոչ մի մասն չէ, որով կարելի
լինէր չափել միմյանց, խաղի յատկութիւնը...
Մի և նոյն երգողը, մի և նոյն երկնայեան մի բե-
ցենդներ կարծիքով, բոլորովին ճայն չունի, իսկ
միւս բեցենդներ կարծիքով անմասն էր: Մի և
նոյն օպերան մի բեցենդներ կարծիքով հրաշալի
անցաւ, իսկ միւսի կարծիքով՝ բոլորովին խայտա-
ռակութիւն էր: Թէ չնամակ ահ և բար և կա-
մակ ահ հայեցակէտը այնքան տիրապետել է, որ
մի և նոյն ներկայացմանը՝ մէկի կարծիքով թատ-
րոնը լի էր, իսկ միւսի կարծիքով՝ դատարկ էր...

Եւ միամիտներ կարծում են, թէ այդ բոլորի
չարժաւորը գործն է: Իսկ իրանց այդ հերոսները
խաբում են իրանց խիղճը՝ կարծելով թէ իրանց
մի դեր են կատարում, թատրոնի հարց են պաշտ-
պանում, ժողովրդի գեղարուեստական զարգաց-
մանն են նպաստում:

Հանաքիչներ...

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻՑ

Հոկտեմբերի 2-ին

Կանոնաւոր խմբագրական երգեցողութեան հա-
մար շատ ազգերի մէջ մեծաքանակ ծախսեր են
անում: Այդ բանում յետ չէ մնում Պետերբուրգի
հայոց եկեղեցական ժողովը, որ ծախսեր է ա-

րը կառուցված են մեծ մասամբ քարերից (որտեղ
քարը առատ է), ինչպէս Դարիւնաճորում, Սևանի
լճի շուրջը, Նոր-Բայազետի գաւառում, Թիֆլիսից
տանող ճանապարհի վրա, Աշտարակում և Արա-
րանի մահալում: Եւ այդ գիւղերի մեծ մասը ներ-
կայացնում են մեղ թէև քարից շինված, բայց
գեանափոր տներ և միայն մի քանի գիւղերում
քարեայ տները գեանափոր չեն, այլ մի յարկանի
կամ նոյն իսկ երկու յարկանի տներ են լինում:
Այդ վերջին ձևի օրինակը կարող է լինել մասամբ
Բանաբեր, բայց գլխաւորապէս Աշտարակի գիւղը:
Նահանգի միւս տեղերում, գլխաւորապէս Արա-
րատեան ահագին տափարակի դաշտում, որտեղ
շինութեան համար հարկաւոր քարը ամենին չէ
գտնվում, ինչպէս օրինակ Չանդի-Բասարում,
Գանդի-Բասարում, Վերջ-Բասարում, Էջմիածնի
գիւղերում, Սուրմալուի գաւառում, և Հին-Նախի-
ջևանի գաւառում,—գիւղացիների բնակութիւն-
ները ներկայացնում են մեղ իմ նախկին թղթակ-
ցութիւններին մէջ նկարագրված՝ սովորական
ցեխից շինված, ոչ գեանափոր և հիմքում լայն,
իսկ կտուրի մօտ աւելի նեղ շրջապատ ունեցող
տներ: Տափալ կտուրները, առանց բացառու-
թեան, ընդհանուր երեւոյթ են կազմում ամբողջ
Երևանեան նահանգի գիւղերում...

Այդտեղի դէպ կը լինի յիշել, որ անտառի
բացակայութեան պատճառով, մի քանի գիւղե-
րում արուեստական կերպով դարգացրած մէրեն-
ներից անտառից գլխաւորապէս բարդի ծառերի
փայտը ծառայում է որպէս գերաններ (ծածկի

նում լաւ խումբ և լաւ ձայներ ունենալու հա-
մար: Այս եկեղեցում երգել են նշանաւոր աե-
նօրներ և բարիտոններ, ինչպէս հանգուցեալ
Ստեփանեանց, Շահալեանց, որ այժմ Ի-

տալիայումն է. բարիտոն Ամիրջանեանց, որը
նոյնպէս գնալու է Իտալիա իր ձայնը կատարելա-
գործելու, և ներկայումս Վարդիկեանց և Ջանոյեանց,
որոնք իրանց ձայնով գրաւում են հասարակու-
թեան ուշադրութիւնը: Ոչ թէ միայն հայերը, այլ
և օտարազգիները լցնում են կիրակի օրերը եկե-
ղեցին: Երկու տարի սրանից առաջ պ. Էքմա-
լեանց այստեղ ունէր մի կանոնաւոր երգեցիկ
խումբ, որը արժանի էր ամեն տեսակ գովեստի,
և խրախուսանքը, բայց զանազան պատճառներից
խումբը ցրվելով և ինքն պ. Էքմալեանցն էլ, չը
կարողանալով տանել զանազան մարդկանց խա-
ղաւանջները, ասպարէզ տուեց այնպիսի մարդ-
կանց, որոնք անընդունակ են այդ գործի համար:
Այդպէս, օրինակ, այս օրերս հանդէս է եկել մի
երիտասարդ, Պապով ազգանունով. նա առաջ սո-
վորում էր լեռնային ինստիտուտում, իսկ այժմ
տիրացութեամբ է պարագում այստեղի հայոց ե-
կեղեցում: Նա երգել է պ. Էքմալեանցի լիւր-
բում, իրեն բաւ, և մի առ. ժամանակ էլ մի
անյայտ երաժշտի մօտ պարագալով, այժմ հան-
դէս է դալիս որպէս հեղինակ և ձեռնամուխ է
լինում մի այնպիսի փափուկ գործի, ինչպիսին է
հայոց եկեղեցական երգեցողութիւնը: Մի քանի
չաքաթ պարագալուց յետոյ խմբի հետ, իր կազ-
մած քառաձայն խմբերով, այս կիրակի, սեպ-
տեմբերի 30-ին երգեցին: Բայց ինչ բարեբան
խառնակութիւն, ինչպիսի երաժշտական խառն,
որ երեւակել անգամ չէք կարող: Խումբը եր-
գում էր առանց տակտերի, փոխանակ չորս ձայ-
նի լսվում էին միայն տնօրէնի և բասերի ձայ-
ները. բայց ուր էին մնացել բարիտոններ և ալտո-
ները: Երգվածներն էլ կազմում էին այնպիսի դի-
սօնանմաներ, որ ականջ ծակելու չափ ծանր էր
լսել: Մի քանի մանր կտորներ վատ չէին, թէպէտ
այդ էլ, ինչպէս հաւատացնում են, Էքմալեանցից
է վերցրած. իսկ միւսներում կատարեալ բացա-
կայ էր տարրական թէթիւր գիտութիւնը: Շատ
տեղ չը հասկանալով ասիական դաժմանքի
կազմութիւնը, դրել է եւրօպական ալ ուրդն էր,
այն էլ երաժշտութեան մէջ արդիւնաւոր ալորդներ

կայտ) կտուրը պահպանելու համար, նմանապէս
տները և լուսամուտները շինելու համար: Իսկ
որպէս վառելիք, բացի մի քանի տեղերում եղած
արուեստական մէրեններից ստացվող մանր ճիւղե-
րից, ամբողջ Երևանեան նահանգում միմյանց
ա թ ա բ, այսինքն չորացրած և աղիւնների ձևն
ունեցող անասունների աղբն է գործածվում:

Գալով Երևանեան նահանգի հայ և թուրք գիւ-
ղական աղգաբնակութեան ընաւորութեան,—ես
այսքան կարող եմ ասել, որ այդ խառնիկում
աղգաբնակութեանը անհարկն է յատկացնել մի
որ և է որոշ, բնաւորիչ, ընդհանուր բնաւորու-
թեան գիծ: Երկրի հայ գիւղական աղգաբնակու-
թեան մէջ շատ քիչ կը գտնէք մի ամբողջ գիւղ,
որը բաղկացած լինէր հին, հիմնական, բնիկ ժո-
ղովրդից, այլ բնակիչների մեծ մասը գաղթական-
ներ են հազար ու մի տեղերից, և այն էլ համե-
մատաբար նոր ժամանակներում գաղթած: Այդ է
պատճառը, որ Երևանեան նահանգի այլ և այլ
տեղերի գիւղական աղգաբնակութեան ընաւորու-
թիւնը իրարից տարբեր է լինում՝ նայելով ժո-
ղովրդի վրա ներգործող տեղագրական ու կլի-
մայական պայմաններին, ժողովրդի ցեղական
յատկութիւններին, նրա հողային պայմաններին,
երկրորդական պարագայներին, բնականային ու
հասարակական կեանքի եղանակին... Եւ իրաւ
միջոցով Պարսից ժամանակներից մնացած բնիկ,
զուտ և անխառն աղգաբնակութիւն ներկայաց-
նող գիւղեր շատ սակաւ են Երևանեան նահան-
գում, երկրի գիւղական աղգաբնակութեան մի

և կազմում էր կատարեալ դիմադրանք, իսկ շատ տեղ ըստ իր հասցից փոխել է եղանակներ:

Պ. Բեգլարը չէր կարողանալով «սուրբ, սուրբ» ժամանակ ուղիղ ձայն գտնել կամերտոնի վրա մի տեսակ սկսեցին տենտորները և մինչև պատարագի վերջը տարան ամենախայտառակ կերպով, շատ տեղերն էլ երգեցին ունիստն, իսկ «Հայր մեր» սկզբում բոլորովին չէր կարելի ձանաչել թէ դրանք հայոց եղանակներ են, այնքան փոխված էին և ալյանդակված:

Ժողովրդականներից շատերը չէր կամենալով կարծիք օտարների ներկայութեամբ, դուրս էին գնում եկեղեցուց:

Պ. Պապովին խորհուրդ կը տային որ նախ լաւ ուսումնասիրել տարրական թէօրիան, և լաւ ուշ դարձնի հարմարաբար վրա. իսկ ինչ վերաբերում է հայոց պատարագի երգեցողութեան՝ թող ձեռնամուկ չը լինի նրա եղանակների փոփոխութեան, առանց որոշուած թէ նրանց տեղը ինչ կարող է դնել:

ՆԱՄԱԿ ՄԵԼՈՒՅԻՅ

Հոկտեմբերի 3-ին Տեղական հայոց եկեղեցական-ծխական դպրոցի հոգաբարձուները ընտրութիւն եղաւ: Մինչև այժմ, նախկին կանոնադրութեան համեմատ, ընտրվում էին չորս հոգաբարձուներ. այժմ, նոր կանոնադրութեան համեմատ, ընտրվեցան երկու հոգաբարձուներ, որոնցից մէկը պէտք է վարէ նաև երէց-փոխի պաշտօն: Այժմ մեր դեռ եւս նոր կազմակերպվող ուսումնարանի բաղձը կախված է ընտրված հոգաբարձուների գործունեութիւնից: Քաղաքի հայոց դպրոցը, որը ահա երկրորդ տարին է, հետզհետէ կանոնաւորվում է, դուրս գալով հին խալիֆայական դրութիւնից, դեռ եւս շատ հեռի է բարեկարգ ուսումնարան համարվելուց: Գաղտնի մէջ ուսումնարանական պարագաներ գրեթէ չը կան: Գաղտնի գրադարանում, բացի մի քանի հատուկորդ անօրուտ զրբերից, մի փոքր ի շատէ նշանակութիւն ունեցող գիրք չը կայ: Գաղտնի շինութիւնը, որ մինչև տեղիս նորակառուց, եկեղեցու շինութիւնը աղօթատուն է եղած, բոլորովին անյարմար է դպրոցի համար:

Քաղաքի մօտ քառասուն տուն հայ բնակիչներն մեծամասնութիւնը աղքատ լինելով, ի հարկէ, անկարելի է միանգամից պահանջել, որ ամեն ինչ կանոնաւորվի, բայց և այնպէս պարտք ենք համարում յիշեցնել, որ եթէ իր ժամանակին կարեւոր ուշադրութիւն դարձնվի, հետզհետէ դպրոցի բոլոր պահանջները կը լրացվեն: Այժմ է նկատու, որ ուսումնարանը բարեկարգելու համար քառական չէ միայն հին ուսուցիչները տեղ նորերը, հարկերը, անհրաժեշտ է միջոցներ եւս տալ ուսուցիչներին, որպէս զի նրանց աշխատանքը կարելի եղածին չափ ազդեցութեամբ լինի: Կրկնում ենք, առանց դպրոցական անհրաժեշտ պարագաների, առանց մանկական ընթերցանու-

ման, ինչպէս Մարկաշտում, Նոր-Բայազետի կողմերում, Աբրահամի և այլն:—Գաղթականներ են թիրաքաց Հայաստանի արևելեան մասից, ուրիշ կողմերում, ինչպէս Գաւառի մէջ՝ գաղթականներ են Մաքուի խնութիւնից, իսկ Զանգի-Բասարի և Գառնի-Բասարի գիւղերում գաղթականներ են Սալմաստից, Ուրմիայից, Խոյից և այլն... Ալեքսանդրապոլի գաւառն էլ մեծ մասամբ բնակեցւած է թիրաքաց Հայաստանի արևմտեան մասից եկած գաղթականներով: Այդպիսով իւրաքանչիւր մասերի հայ գիւղական ազգաբնակչութեան տիրան ու բնաւորութիւնը տարբեր է նրան ազգաբնակչութեան միւս մասերի տիրան ու բնաւորութիւնից:

Հայ գիւղական ժողովրդի բնաւորութեան վրա ներգործում է նշանաւոր կերպով և այն հանդիմանքը՝ արդեօք այս կամ այն չըջանի, այս կամ այն գիւղի հայ ժողովուրդը դուրս, անխառն հայ տարրից է բաղկացած, թէ հայերը խառն են ապրում մահմետականների հետ, և այն էլ թուրք, թէ բուն պարսիկ մահմետականների հետ, որոնք, աւելի մոտերը, իրանական ծագումից են...

Չէ կարելի, ի հարկէ, չը խոստովանվել, որ հազը ընդհանրապէս աշխատասէր, քաղաքակրթութեան նոր ձևերն ըմբռնելու և իրացնելու ընդունակ մի ազգութիւն է, որը եթէ ճշմարիտ քաղաքակրթութիւն կը կարողանայ քաղաքակրթական ազդեցութիւն ունենալ և երկրի մէջ իրան չըջապատող միւս ազգերի վրա, սակայն անուրանալի է, որ այնպէս, ինչպէս նա այժմ կայ, հայ ժողո-

թեան գրեթէ, ուսուցիչը որքան էլ որ աշխատող լինի, չէ կարող ցանկացած առաջադիմութիւնը ցոյց տալ: Նորընտիր հոգաբարձու երբեք Չեքնիկեաններին, ի հարկէ, անյայտ չեն դպրոցի թերութիւնները, և նրանց անցեալ տարիները արդիւնաւէտ գործը տեսնելով, յուսով ենք, որ աշխատանք չեն խնայի ամեն բան կարգի բերելու:

Ի դէպ է խնդրել մեր հեղինակներին և թարգմանիչներին, որ չը դանտն իրանց աշխատութիւնները մի-մի օրինակ նախընտրեն մեր դպրոցի աղքատ գրադարանին, որով մասամբ նպաստած կը լինեն տեղիս չքաւոր հայ մանկները կրթութեան գործին: Նախընտրեն դրերը կարելի է ուղարկել ուղղակի դպրոցի գրադարանի անուամբ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ ուղարկված է նորերս թիֆլիսում տպագրած մի հետազոտութիւն՝ «Состояніе скотоводства на Кавказѣ» (Անասնապահութեան դրութիւնը Կովկասում) վերնագրով, աշխատութիւն պ. Ա. Քալաշնիկովի: Այդ հետազոտութեան մէջ գրել-խառնապէս խօսվում է եղջերաւոր կենդանիների մասին: «Անասնապահութեան» ուսումնասիրութեանը կցած է շատ մեծ յաւելում, որը իր մէջ պարունակում է ներքին Անդրկովկասեան և հիւսիսային Կովկասի նահանգների անասնապահութեան և մասամբ ազգաբնակչութեան պարագաների մասին:

Կ. Պապովը միայն է լոյս տեսնել մի նոր շաբաթաթիւթ «Նախիկ» անունով: Մենք ստացել ենք այդ շաբաթաթիւթի առաջին համարը, ուր, խօսելով պոլսեցիների լեզուով, «թէն ծաղիկ է, բայց հոտ չունի»: Թերթի իւրաքանչիւր համարը բաղկացած է 8 միծաղիկ երեսից. նրա մէջ կան բազմաթիւ յօդուածներ շատ բաների մասին, բայց եթէ հարցնենք, թէ ինչ կայ այդ յօդուածների մէջ—դժուար է պատասխանել: Արտաքուստ «Նախիկ» հարստ է երևում, բայց ներքին այդ արտաքին հարստութեան մէջ դատարկ ու թուլ է տիրում: Զարմանալի են այդ պոլսեցիք, երեսներ են լցնում, ամբողջ էջեր են գրում, բայց ոչինչ չեն ասում: Շաբաթաթիւթի տնօրէն հրատարակելիս է Յովհան Փալադաշեան անունով մի պարոն, որի անունը Պալսի գրողների մէջ, գոնէ մեքը առիթ չենք ունեցել պատահելու: Խուսափառների համար ծաղիկը տարեկան հինգ բուրդի կարծեմաք: Յանկանում ենք այդ նոր թերթին ընդունակ լինել մի դեր կատարելու: Պալսի մասով է մէջ:

Արդարադատութեան միջնորդութիւնը շուտով պէտք է ներկայացնի պետական խորհրդին մի նախադիմ՝ փոփոխութիւնների մտցնելու դատաստանական քննիչների վերաբերեալ այժմեան կանոնների մէջ: Նոր նախադիմի նպատակն է նշա-

վորում և յատկապէս հայ գիւղական ազգաբնակչութիւնը՝ շատ էլ բարոյական ժողովուրդ չէ: Ընդհանրապէս հայ գիւղացին կեղծաւոր է, խորամանկ է, գող է, պատրաստ է յարմար դէպքում կողոպտել իր կալուածատիրոջ արդիւնքը, գողանալ ամեն ինչ նրա ամբարանոցից ու այգուց և ապա անմեղ ձեռնալով, բացարձակապէս ուրանալ իր արածը, հայ գիւղացին չէ խորշում իր հարեան համալիր-դպրու խոտի կամ ցորենի դեղերն այրելուց, նա սովորել է կաշառել և կաշառել, նա դուրի է համոզարշխութեան, միաբանութեան ոգուց և այլն, —ուսկայն ճշմարտութիւնը պահանջում է այն էլ խոստովանվել, որ հայ գիւղացին անհամեմատ աւելի բարոյական է, որտեղ նա կազմում է հայոց անխառն, դուրս տարր և աւելի անբարոյական է որտեղ ապրում է թուրքի հետ միասին, մահմետական տարրի հարեանութեամբ, որտեղ մահմետանոց նա ազգաբնակչութեան փոքրամասնութիւն է կազմում թուրքերի հետ համեմատելով: Հայ գիւղացու բարոյականութիւնը փչացում է ստորին պաշտօնեայի և գիւղական տանուտէրի կաշառականութիւնը, հարեան թուրք ազգաբնակչութեան օրինակը, որը սովոր է խաւար տարր կազմելով, աւելի հակված է դէպի գողութիւնը, կողոպտութիւնները, աւաղակութիւնն ու սպանութիւնը: Գիւղացու բարոյականութիւնը փչացնում են և կաշառածատիրոջ մահմետանոց թուրք կաշառածատիրոջ գիւղացի, հարստաբարոյ ձգտումները: Թուրք միւլքաղաքը չէ խորշում վաշխառու-

նակել դատաստանական քննիչների պաշտօնում՝ դատարարութեան հետ աւելի ծանօթ, և դատաստանական գործերին աւելի հմուտ մարդկանց:

Պետերբուրգի նահանգում գտնվող վանքերին կից սկսել են հիմնել գրադարաններ, գիւղացի երեխաներին կարգաւոր գրքեր տալու համար:

«Արեւելք» մէջ կարդում ենք. «Գործութեամբ կրթանալը, թէ «Հայրենիք» օրաթիւթին, հրատարակման հրամանի արժանացած է և վաղուան սկսեալ սլոնի հրատարակուի»:

Մրանից 4 տարի առաջ Միացեալ ընկերութեան փոխ-տեսուչ Մարկու Նախմանեան Մուշի մէջ ձեռքաւորված և Նրուսաղէմ էր ուղարկված: Այժմ «Արեւելք» յիշեցնելով այդ լուրը, գրում է հետեւեալը. «Այժմ գործութեամբ կը ծանուցանենք, թէ Նրուսաղէմի Գարութիւն պատրիարք հօր ի կայսերական պալատ մատուցուած խնդրանք վրայ, վհ. սուլթանը բարեհաճած էր իւր ծննդեան տարեդարձին առթիւ 1890 մարտի 25 կայսերական իրաւունքով ներում շնորհել Մարկու էջ. Նահմանեանի, որ երկու ամիս առաջ մայրաքաղաքս եկաւ և այսօր Տրապիզոն մեկնեցաւ, անտի իւր հայրենիքը՝ վան երթալու համար»:

Նրկուշաբթի, հոկտեմբերի 8-ին, թիֆլիսի քաղաքային թատրոնում օպերային խումբը ներկայացրեց Մեկերբերի «Հուգենօտներ» օպերան, կամ աւելի ճիշդն ասած, այդ օպերայի խայտառակ աշխատակիցներ էին: Միանգամայն յանդգնութիւն և դէպի հասարակութիւնը անհերքելի արհամարհանք պէտք է համարել սիրված օպերայի այդ տեսակ ներկայացումը: Համբարները չը գիտէին թէ ինչ են երգում, օրկեստրը կեղծում էր ամենամանրանքի կերպով, զանազան Մատէինների, Բազալտների, Վլենդերֆների և ընկ. երգածն էլ միայն ծիծաղ էր յարուցանում. բնութագրական մասը նոյնպէս թույլ դերասանները և խորխորանները ժամանակին չեն դուրս գնում և գալիս, բնութիւն չէ լուսանկարում երև հարկին է, հրացանի ձայնը լսվում է միայն այն ժամանակ, երբ այլ եւս հարկաւորութիւն չը կայ և այլն և այլն: Եւ այդ ամենամեղ ֆոնի վրա, ինչպէս երկու ասող փայլում էին Վանդերբիլ մատակները, նրանց երկուսն, մահմետանոց պարտնի ձայնը երկուց աջող էր, և նրանք երգում էին շատ զեղեցիկ կերպով: Աչքի էին ընկնում առաջին գործողութեան մէջ Բաուլի Բոմանը և երկրորդ գործողութեան մէջ Վալենտինայի և Մարկուի հետ ունեցած դուէտի առաջին մասը. իսկ չորրորդ գործողութեան մէջ Բաուլի և Վալենտինայի յայտնի դուէտը միանգամայն հիացրեց հասարակութեանը: Հասարակութիւնը շատ ընկ կար...

Թիֆլիսի դուստրի շրջաններում այժմ արդէն սկսել են խօսել, թէ ով կընտրվի քաղաքագլուխ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ: Թեկնա-

թեամբ պարագիւրեց, նա թէ դրամ և թէ ցորեն փոխ է տալիս իր գիւղացուն անհրաժեշտութիւն մեծ տոկոսներով, նա իրան հու հազանգ գիւղական տանուտէրի ձեռքով, որը շատ անգամ պարտ է իրան՝ կազմել և տալիս կեղծ հասարակային վճիռներ, կաշառել տալով գիւղացիներին, կամ ներգործելով իրան պարտապան գիւղացիների վրա, որպէս զի իսկ գիւղացիներից գետնի մի կտոր, որի վրա կառուցանում է դիպուր մի ջաղաց: Թուրք թէ հայ միւլքաղաքը, կաշառելով վլաններին, դատ է բաց անում գիւղի հասարակութեան դէմ, ապացուցանելով, որ միւլքաղաքական հողի մի մասը իրան կալուածատիրոջ է պատկանում, որպէս բացառական սեփականութիւն, որպէս անպայման սեփական հողատիրութիւն. այն ժամանակ գիւղացիքն էլ, ուրիշ էլք չունենալով իրանց կողմից սկսում են կաշառել վլաններին, դատարանի առջև իրանց իրաւունքը պաշտպանելու համար: Այդ տեսակ յարաբերութիւնները, իրերի այդ տեսակ դրութիւնը ծնեցնում է գիւղի մէջ բազմ ու վարքերի կատարեալ ապականութիւն: Գաղաւաղաց ու կաշառվելու ծագում են խռովութիւններ, ընտանեկան երկպառակութիւններ, շատ անգամ ծեծ, կոխ և նոյն իսկ վիրաւորումներն ու սպանութիւններ...

Այդ բոլորն աւելացրեք անդադրեալ գիւղացու վրա որ և է բարոյականացող ոյժի ներգործութեան բացակայութիւն, դպրոցի, ուսուցչի ներգործութեան բացակայութիւն, և ձեզ հաս-

ծուներ շատ կան. Թիֆլիսում մեծ է և այն անձանց թիւը, որոնց գլխում պտտում է քաղաքագլուխ ավտոմատ վրա նստելու միտքը: Սակայն, ինչպէս հաւատարմութեամբ են գործին տեղեկանքը, այժմեան քաղաքագլուխ Մատիսով նորից կընտրվի: Իսկ եթէ ինքն պ. Մատիսով հրաժարվի քուէ արկվելուց, այն ժամանակ ամենահաւանական թեկնածուները կը լինեն Պօղոս Խաչաթուր և Գ. Լուխանով:

Այս օրերս Երզրումից Թիֆլիս եկաւ այնտեղի ուսաց հիւպատոս պ. Դէննէտ, որը գնալու է Պետերբուրգ:

ԵՐԵՎԱՆԻՅ մեզ գրում են. «Ամիս 17-ին, կայսերական գնացքի խորտակման տարեդարձի օրը բացվելու է տեղիս քաղաքային հիւանդանոցը, որի մուտքը ունեւորների համար 40 կօպ. է, իսկ քաւարների համար՝ ձրի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԿՐԻՍՊԻՆ ԶԱՌԸ

Այս օրերս խաղական միջնորդ-նախագահ մի բանկէտի ժամանակ գեմից ներկայ եղողներ մի ճառով:

Այդ ճառի մասին հետագիւրն արդէն լուր է բերել: Բացի հեռագրական լուրերից, այժմ եւրօպական լրագրիչները հաղորդելով Կրիսպին ճառի մանրամասնութիւնները, ալ ու ձայն քննադատում են նրան: Մի քանի լրագրիչներ այդ ճառը համարում են մի մեծ սխալ Կրիսպինի կողմից: Միւսները հայրենապաշտութեան նշան են տեսնում այդ ճառի մէջ, իսկ ոմանք էլ այդ ճառը համարում են քաղաքական նոր տարածայնութիւնների սկզբնապատճառ: Մի խօսքով այս անգամ Կրիսպին ճառն աւելի արժուէ հանց, քան թէ կարելի էր սպասել:

Եւ ինչն է՝ այդ արժուէի պատճառը—պարզ կերպով յայտնի չէ: Ասում ենք պարզ կերպով յայտնի չէ, որովհետեւ ինքն Կրիսպին իր ճառում որոշ մտքեր համարեալ թէ չէ յայտնում, այլ մի միայն ակնարկութիւններ է անում հարեան պետութիւնների հետ ունեցած յարաբերութիւնների մասին, ակնարկութիւններ, որ կարելի է և այսպէս և այնպէս բացատրել: Բայց և այնպէս լրագրիչների մեծամասնութիւնը այն կարծիքն է, որ իր այդ ճառում Կրիսպին բարեկամական զգացմունքներ յայտնելով Գերմանիային, թշնամական ակնարկութիւններ է անում Աւստրիայի և մասամբ Յիւստիայի դէմ:

Իտալիայի մէջ եւս այդ ճառն ահագին արժուէ հանց: Կրիսպին քաղաքական հակառակորդները կատարել են այն բացարձակ թշնամութեան դէմ, որ նա իր ճառի իւրաքանչիւր բառում արտայայտել է: Նրանք լճուէ են բացարձակ կռիւ մղել այժմեան միջնորդ-նախագահի դէմ, և այդ կռիւը

կանայի կը լինի ինչի է փչանում, բարոյայտն ապականվում գիւղական տարրը:

Ընդհանուր կարծիք է, որ հայ գիւղական տարրը եթէ թուրք տարրից աւելի ապականված, աւելի գող և խաբուսեայ չէ, գոնէ պակաս էլ քիչ այդ վերջինից վատ յատկութիւնները կողմից: Հին նահապետական ոգին, երկնադածութիւնն ու պատկառանքը որ և է հեղինակութեան աւելի հաւատարմութիւնը դէպի կալուածատիրոջ օջախը այլ եւս չը կան,—իսկ իսկ կողմից քաղաքակրթութիւնը կարողանալ պարտաճանաչութեան զգացմունքն էլ դեռ եւս չէ պատուաւանկ մեր գիւղական տարրի մէջ. այդպիսով մեր առջև հանդիսանում է մի անմիջական, ցաւալի անցողական դրութիւն՝ հինից դէպի նորը...

Գուցէ եւս սխալվում եմ, բայց դարձեալ կրկնում եմ (և դա իմ խորին համոզմունքն է) որ դուռ հայոց, անխառն, խիտ հայոց ազգաբնակչութիւն ներկայացնող գիւղական տարրը՝ անխառն մաս աւելի բարոյական է, քան թէ թուրքերը չըջանում և թուրքերի ներգործութեան տակ ասլորդ հայ գիւղական ազգաբնակչութիւնը:

Որպէս աչքի ընկնող մի հակապատկեր եւս օրինակ կը բերեմ երկու միմիանցից տարրերի միջև ընկած շրջանների՝ Հին-Նախիջևան գաւառի և Սարաւան մահալի հայ գիւղական ազգաբնակչութիւնը:

Այս մասին հետեւեալ անգամ: Գրիգոր Արծրունի

ՈւձՈՒՆ-ԱՂԱ, 9 հոկտեմբերի: Այստեղ հասան մի խումբ ֆրանսիացիներ՝ Պրիվյի առաջնորդությամբ, ծանոթանալու համար տեղական բուրդի և Անդրկասպյան, Բախարայի, հիսթային Աղա-նիստանի և Թուրքեստանի ոչխարապահության հետ: Այն պահին դրամական միջոցները, որ ունեն եկողները, յոյս են տալիս, որ զգալի կերպով կը կենդանանայ ոչխարապահությունը և բոլոր առևտուրը, մանապես ուսաց միջին-ասիական նահանգներում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 հոկտեմբերի: Ներքին գործերի մինիստրի որոշմամբ, «Восточное Обозрение» լրագրի հրատարակումը դադարեցրած է 4 ամսով: 13-դ գործարածին հրամանատար կոմս Ցառիչևիկ նշանակված է կովկասյան քաղաքական մասի կառավարչապետի և կովկասյան զինուորական շրջանի գործերի հրամանատարի օգնական: Հոկտեմբերի 17-ին, Օգոստափառ Ընտանիքի վտանգից հրաշքով փրկվելու տարեդարձին հրամայված է զորքերին ամեն տեղ եկեղեցական հանդես տանել, զորացողական մաղթանքներ կատարել և հատարակ զինուորական վարժարանները և զբաղմունքներից ազատել: «С. Пет. Вѣд.» լրագրի հաղորդում է, որ արքունական գիտնականները և պալատական գրեթե Միլերով բաղադրված վերաբերակ կանոնադրությունը կառավարվի պետական խորհրդին և որ մտադրված կայ նշանակել Միլերով ղեկավարել զինուորները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 9-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե. . . 81 ր. 40 Կ.

Բերլինի վրա 100 մարկ — . . .	39	> 85
Փարիզի վրա 100 ֆրանկ — . . .	32	> 20
Ոսկի — . . .	արծե	> 53
Մաքսային կուպոններ — . . .	130	> 87
Արծաթ — . . .	1	> 12
Բորսային դիվիդենդներ — . . .	5 և 6 1/2	> 0
Պետ. բանկի 5% տոմս 1-ին շրջանի. . .	101	> 62
— — — — — 2-րդ — . . .	101	> 25
— — — — — 3-րդ — . . .	101	> —
— — — — — 4-րդ — . . .	101	> —
— — — — — 5-րդ — . . .	101	> —
— — — — — 6-րդ — . . .	101	> —
6% ոսկեայ փոխառություն — . . .	143	> —
4% ոսկեայ բնուտ — . . .	—	> —
Արևելյան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	102	> —
— — — — — 2-րդ — . . .	102	> —
— — — — — 3-րդ — . . .	103	> 62
Ներքին 5% առաջին փոխառություն. . .	229	> —
— — — — — երկրորդ — . . .	212	> 75
— — — — — երրորդ ադն. կալ. ր. . .	211	> —
Պետական. երկաթուղային բնուտ. . .	101	> 75
5 1/2% բնուտ — . . .	103	> 75
5% ներքին փոխառություն — . . .	88	> 94
5% գրառ. թղթ. ադն. կալ. բանկի . . .	100	> 37
4% վկայակ. գրառ. հող. բանկի. . .	103	> 50
4 1/2% գրառական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. բնուտ. . .	—	> —
— — — — — թղթադ. . .	99	> 37
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. բնուտ. . .	97	> 25
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ. . .	96	> —
Օդեսայի — . . .	97	> —
Թիֆլիսի — . . .	—	> —
Գրառ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. . .	—	> —
— — — — — փոխառություն — . . .	—	> —
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրությունը հանդարտ է:		

Ժամանակաւոր խմբագիր Յ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԽԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՐՈՎԻԶՈՐ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹՈՂԻՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՑՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍ.

ԹԻՖԼԻՍԻՄԻ Գեղազորական ապրանքների կովկասյան ընկերության մէջ և պ. պ. Շահ-պարոնեանցի, Մակկէրի, Սէնչի-կովսկու և Ագաբուրի գեղա-տներում:



31—52 (Հ.)

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵՍՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱՃԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 19/31 հոկտեմբերի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ LA MANCHE (ՄԱՆՇ) շոգենաւոր, նաւապետ CAUVIN (ԿՈՎԷՆ) գեպի Կ. Պօլիս, Մարսէլ, Հավր, Լոնդոն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները:
Ագէնաները՝ ԲԱԹՈՒՄԻՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՆՉԵՐԻ, ԹԻՖԼԻՍԻՄԻՄ ԳԵՆՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, Իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ՝ ԳՕԼԻՂՈՒՍՏ:

1—2

ԾԽԱՌՈՏԻ ԷԿՍՏՐԱԿՏ
ՆԻԿՈԼԱՅ ԲՕՂԴԱՆՈՎԻ ԵՒ ԸՆԿ.

ԱՄԵՐԱՆԱԽ ԵՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ ոչխարներին, եղջիւրաւոր և այլ կենդանիներին բորոտութիւնից և կաշու ուրիշ ամեն տեսակ հիւանդութիւններից բժշկելու, նմանապէս ձիերին, շներին կաշու ամեն տեսակ հիւանդութիւններից և թռչուններին պարապիտներից բժշկելու համար:

ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ամեն տեսակ ծագիկներ, բոյսեր, ծառեր և բանջարեղէններ՝ որդեն-րից, թրթուրներից և ուրիշ միջաններից:

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍ ԹԻՖԼԻՍԻՄԻՄ Գեղազորական ապրանքների վաճառման ԲԱՐՁՐԱ-ԳՈՅՆ հաստատութիւն կովկասյան ընկերութեան մէջ:

14—25 (Հ.)



Մ. Գ. ՅԵՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՑՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆԻ
ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԸ

Պալատի այգու շինանոց, անկիւնի մաղաղիւնում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկեայ, պողպատեայ և կրկայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԵՆՏԵՆՆԵՐ և ԼՕՐԵՆՏԵՐ: Թատրոնական և դաշտային ԲԻՆՈ-ՎԼՆԵՐ, ՋԵՐՄԱՆԱՓԵՐ, Թէ սենեակների, Թէ դուրսը կախելու և Թէ վանանների համար վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ ջերմապահներ: Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մի-տալական թելեր:

Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մազաղիւնում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագիների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաշափաւոր են:

36—50 (Հ.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

Լոյս տեսան ԲԱՅՅԻԻ ԴԱԽԻԹ-ԲԷԿ 3 հա-տոր և վերջաբան. զինը ճանապարհածախս-տով 3 ր.
ԽԵՆԹԸ և ՋԱԼԱԼԷԿԻՆ մի գլբի մէջ 3 ր.
Ծախվում է «Աղբիւր» վաճառանոցում և տիկին Մելիք-Յակոբեանի մոտ: 1—10

Լոյս տեսաւ «ՋԱԿԵԱՐԻ ԲՆԱՐԸ» խորա-զրով բանաստեղծութիւնները: Գինն է, ճանապարհածախսով 60 կոպէկ: Դիմել Բաքու. сященнику Григоріанцъ, Баку. 1—3

Արդէն թարգմանվում է բժշկապետ Պօլիովսկու «ОВЪ УХОДЪ ЗА МАЛЫМИ ДѢТЬМИ» գիրքը:

2—2

ՀԱՅՈՒՆԵԿԸ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

91-ն Հոկտեմբերի 1890

Պ Ա Հ Ա Ն Ջ Ք	Թիֆլիսում	Բազուի և Բա-թումի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուի և Բա-թումի բաժն.	Ընդամենը
1. Կրամարիկ (առձեռն թղթադրամ)	33,717—66	101,014—04	134,731—70	1. Հիմնական դրամադրութիւն	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	41,656—47	121,000 —	162,656—47	2. Պահեստի դրամադրութիւն	179,500—64	—	179,500—64
3. Զեղում (Disconto) մուրհակաց երկու ստո-րադրութեամբ.	2,557,486—07	994,174—57	3,521,660—64	3. Կրամական աւանդներ՝	—	—	—
4. Զեղումն տոկոսաբեր թղթ., կարծն. և այլն.	27,464—50	2,417—64	29,882—14	ա) Պայմանաժամով	2,167,773 —	254,879 —	2,422,652 —
5. Փոխառություններն զրաւականով՝	—	—	—	բ) ԳՊահանջ.	251,091—26	66,100 —	317,191—26
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,181,560—66	373,142 —	1,554,702—66	գ) Ընթացիկ հաշիւով հասարակ.	712,630—65	942,777—36	1,655,408—01
բ) > ոչ ապահ. > > >	442,376 —	11,455 —	453,831 —	— > պայմանաւոր.	—	165,239—91	165,239—91
գ) ապրանքների	—	31,870 —	31,870 —	4. Փոխ առած պետ. բանկայի Թիֆլ. բաժ-ապահովված զեղյեալ մուրհակներով.	101,600 —	—	101,600 —
դ) Ոսկւոյ և արծաթի	—	20,845—45	20,845—45	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բանկի Թիֆլ. բաժն. ապահով. մուրհակներով.	70,000 —	—	70,000 —
6. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	368,822—87	67,602 —	437,424—87	6. Թղթակիցներ՝	—	—	—
7. Ոսկի և արտասահմանի փոխանակադրեր.	15,202—61	14,641—93	29,844—54	ա) Նոյա հաշիւը (Loro)	6,684,896—96	—	6,684,896—96
8. Թղթակիցներ՝	—	—	—	բ) Բանկայի հաշիւը (Nostro)	8,730,114—72	—	8,730,114—72
ա) Նոյա հաշիւը (Loro)	6,746,008—18	—	6,746,008—18	7. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ. կենտրոն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	—	430,461—78	430,461—78
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	8,524,368—19	—	8,524,368—19	8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կարծն-ների բաշխը 1882, 1883, 1884, 1885, 1886, 1887, 1888 և 1889 թվերին.	185,491—88	—	185,491—88
9. Բաժինների հաշիւը կենտրոն. վարչութեան հետ	343,081—14	—	343,081—14	9. Ընթացիկ հաշիւներ և այլ գործողու-թեանց.	3,910—40	—	3,910—40
կենտրոն. վարչութեան հաշիւը բաժինների հետ	—	225,857—70	225,857—70	10. Մտացուած տոկոսներ և յանձնարարա-կաններ	74,235—13	36,068—79	110,303—92
10. Բողոքուած մուրհակներ.	40,076—05	—	40,076—05	11. Փոխանցիկ գումարներ.	207,991—16	84,767—37	292,758—53
11. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւն-ներ.	14,735 —	10,105 —	24,840 —	12. Արդիւնք 1889 թվի.	23,143—57	19,171—69	42,315—26
12. Ընթացիկ ծախսեր	37,963—90	18,649—67	56,613—57		—	—	—
13. Կահարասիւք և սկզբնական ծախսեր.	3,068—82	3,688—30	6,757—12		—	—	—
14. Յետ ստացուելիք ծախսեր.	14,791—25	3,002—60	17,793—85		—	—	—
Բ. Ա.	20,392,379—37	1,999,465—90	22,391,845—27	Բ. Ա.	20,392,379—37	1,999,465—90	22,391,845—27